ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

13 օգոստոսի 2020թ. թիվ 1042

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 1565 ՀՐԱՄԱՆԻ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի 2020 թվականի օգոստոսի 12-ի թիվ 02/45.7/38436-2020 գրությունը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2019 թվականի հոկտեմբերի 25-ի «ՀՀ Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2018 թվականի օգոստոսի 21-ի թիվ 276 հրամանի մեջ փոփոխություններ կատարելու և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրեր հաստատելու մասին» թիվ 1565 հրամանի 5-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Invalid signature

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ

2020թ. օգոստոսի 13
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետարանի
գլխավոր քարտուղարի
2020թ. օգոստոսի 13-ի
թիվ 1042 հրամանի

«Հավելված 5.
ՀՀ Լոռու մարզպետարանի
գլխավոր քարտուղարի
2019թ. հոկտեմբերի 25-ի
թիվ 1565 հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺՆԻ /ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ/ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

1. **Ընդհանուր դրույթներ**
1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) հողաշինության և հողօգտագործման բաժնի /մարզային հողային պետական տեսչություն/ (այսուհետ՝ Բաժին) ավագ մասնագետ (ծածկագիր՝ 95-3.3-Մ3-4) **1.2 Ենթակա և հաշվետու է** Ավագ մասնագետը ենթակա և հաշվետու է Բաժնի պետին: **1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները** Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ մասնագետներից մեկը 1.4 **Աշխատավայրը** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, ք. Վանաձոր, Հայքի հրապարակ 1
2. Պաշտոնի բնութագիրը 2.**1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները** 1. մասնակցում է մարզպետի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Սպիտակի և Գուգարքի տարածաշրջանների համայնքների վարչական սահմաններում պետական սեփականության հողերի օտարման և օգտագործման տրամադրման աշխատանքներին 2. նախապատրաստում է մարզի Սպիտակի և Գուգարքի տարածաշրջանների համայնքներում հողերի օգտագործման սխեմաները Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթեր 3. մասնակցում է մարզի հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներին 4. մասնակցում է մարզի Սպիտակի և Գուգարքի տարածաշրջանների համայնքներում հողաշինարարության, հողօգտագործման, հողերի պահպանության, նոր հողերի յուրացման, հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման, ապօրինի հողօգտագործման կանխման, կասեցման և վերացման աշխատանքներին 5. մասնակցում է հողաշինության և հողօգտագործման բնագավառում մարզի Սպիտակի և Գուգարքի տարածաշրջաններում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացմանը, 6. իրականացնում է Սպիտակի և Գուգարքի տարածաշրջանների համայնքներում հողօգտագործման արդյունավետությանն ուղղված նպատակային ծրագրերի, հողերի միավորման, բաժանման և կոնսոլիդացիայի նախագծերի, ինչպես նաև ոլորտի նորմատիվ-իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներ 7. օժանդակում է Սպիտակի և Գուգարքի տարածաշրջանների համայնքներում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի մասնավորեցման և հետագա օգտագործման ուղղությունների, հողերի պահպանության, միավորման և

վերաբաշխման նպատակային ծրագրերի մշակման աշխատանքներին

8. օժանդակում է Սպիտակի և Գուգարքի տարածաշրջանների համայնքներում հողաշինարարության գծով քարտեզագրական, հողային, ագրոքիմիական, երկրաբուսաբանական և այլ հետազոտական աշխատանքներին
9. իրականացնում է համայնքներում չօգտագործվող, անարդյունավետ օգտագործվող կամ իրենց նպատակային նշանակությանն անհամապատասխան օգտագործվող հողերի գույքագրման և հաշվառման աշխատանքներ
10. իրականացնում է Սպիտակի և Գուգարքի տարածաշրջաններում հողային օրենսդրության պահանջների խախտումների կանխման և կանխարգելման աշխատանքներ
11. իրականացնում է Սպիտակի և Գուգարքի տարածաշրջանների համայնքներում սահմանանիշերի ու գեոդեզիական կետերի պահպանման աշխատանքներ:

Իրավունքները՝

1. Ուսումնասիրել և քննարկել Սպիտակի և Գուգարքի տարածաշրջանների համայնքներում կազմված հողաշինարարական գործերը
2. Սպիտակի և Գուգարքի տարածաշրջանների համայնքներից պահանջել և ստանալ հողերի հաշվեկշռի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն
3. կատարել անհրաժեշտ ուսումնասիրություններ ու վերլուծություններ, ամփոփել դրանք և արդյունքների վերաբերյալ Բաժնի պետին ներկայացնել համապատասխան առաջարկություններ
4. ծանոթանալ Սպիտակի և Գուգարքի տարածաշրջանների համայնքներում ՏԻՄ-երի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին, քաղաքաշինական փաստաթղթերին, քննարկել և կատարել վերլուծություններ
5. կատարել անհրաժեշտ ուսումնասիրություններ, պահանջել և ստանալ փաստաթղթեր, տեղեկանքներ, կատարել շրջայցեր
6. կատարել տեղանքի ուսումնասիրություններ:

Պարտականությունները՝

1. Սպիտակի և Գուգարքի տարածաշրջանների համայնքներում կազմված հողաշինական գործի վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ
2. ներկայացնել առաջարկություն
3. ներմուծել և ամփոփել ստացված տեղեկատվությունը և այն ներկայացնել բաժնի պետին
4. կատարել վերլուծություններ և ներկայացնել առաջարկություն
5. տիրապետել համապատասխան օրենսդրությանը, նորմատիվ իրավական ակտերին, ներկայացնել առաջարկություններ հողօգտագործման արդյունավետությանն ուղղված նպատակային ծրագրերի կազմման համար
6. ներկայացնել առաջարկություններ՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի մասնավորեցման և հետագա օգտագործման ուղղությունների, հողերի պահպանության, միավորման և վերաբաշխման նպատակային ծրագրերի կազմման համար
7. քարտեզագրական, հողային, ագրոքիմիական, երկրաբուսաբանական և այլ հետազոտական աշխատանքների վերաբերյալ տրամադրել մասնագիտական ու մեթոդական խորհրդատվություն, նախապատրաստել տեղեկանքներ, հաշվետվություն-ներ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ
8. համայնքներում չօգտագործվող, անարդյունավետ օգտագործվող կամ իրենց նպատակային նշանակությանն անհամապատասխան օգտագործվող հողերի գույքագրման և հաշվառման աշխատանքների վերաբերյալ կազմել տեղեկանքներ
9. հողային օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ Բաժնի պետին ներկայացնել առաջարկություններ

3.Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1 Կրթության, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 **Աշխատանքային ստաժը եւ (կամ) աշխատանքի բնագավառում փորձը**
Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ճարտարագիտության բնագավառում երկրաբաշխի կամ քարտեզագրի կամ տեղանքագրի մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաները

Ընդհանրական կոմպետենցիաներ

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաները

1. կոնֆլիկտների կառավարում
2. ժամանակի կառավարում
3. տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
4. բողոքների բավարարում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը
Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները
Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը
Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության տարածքային ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը
Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը
Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

14/08/2020

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ